

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ա. ՄԱՐԴՈՒԹՅԱՆ

Ինկարվեստական խոսքի ոճական միջոցների համակարգում կարևոր դեր ունեն մակդիրները: Երբ, հաջող ընտրված թարմ մակդիրները, մանավանդ եթե ընտրված են ընդհանուր առարկաների ու երևույթների էությունից, ունեն իմաստային խորություն, հարստացնում են խոսքի բովանդակային կողմը, բովանդակում նրա արտահայտչականությունն ու հուզականությունը:

«Մակդիր» հասկացությունը, անկախ նրա լայն ու նեղ ըմբռնումներից, մեր բերականագիտության մեջ միշտ էլ կապվել է գոյականի հետ և բնութագրվել է որպես գոյականի վրա դրվող բառ: Հետագայում, իհարկե, փոխվել է «մակդիր» հասկացության բովանդակությունը, այն ստացել է ավելի նեղ, զերայնություն ունեցող տարածություն, բայց կապակցելիության բնույթը չի փոխվել:

Մակդիրը այսօր էլ դիտվում է որպես առարկան ու երևույթը գեղարվեստորեն ընթացող լատ կամ բառակապակցություն: Վերջին տարիներին ոճաբանական դրսևանության մեջ նկատվում է մի նոր միտում՝ մակդիրների շարքը դասել նաև դործողությունը բնութագրող բառերը (դառնագին հեկեկայ, մեղմ շնչալ, տխուր երգել, բեռնվ փարվել և այլն): Այս մոտեցումը տեղ է գտել մակդիրին տրված բնորոշումների մեջ. «Մակդիր-առարկան կամ գործողություն (բնութագրող բառ է—Ա. Մ.) բնութագրող բառ, որ ընդգծում է նրանից բնութագրական սրբէ հատկությունն ու որակը»¹: Սա լեզվաբանական բնորոշում է, և այսպես նորն այն է, որ մակդիրը դիտվում է որպես դործողությունը բնութագրող բառ:

Թեպետ էգ. Ջյրաշյանի՝ մակդիրին տրված բնորոշման մեջ բացակայում է գործողությունը հասկացությունը, բայց բերված օրինակներից երևում է, որ նա նույնպես այդ կարգի բառերը դասում է մակդիրների շարքը (տեղները դողացին մեղմաբար, տխուր կծկտաք դու ճգնաժամները)²:

Նույն մոտեցումը տեսնում ենք մակդիրին տրված մեկ այլ բնորոշման մեջ. «Առարկան, երևույթը, գործողությունը արտահայտող բնորոշող բառ կամ բառակապակցություն»³:

Չնայած որ գործողությունը բնութագրող բառերն իրենց ոճական-արտահայտչական դերով ընդհանուր կողմեր ունեն մակդիրների հետ, դրանք նույնպես կարծիքով, միշտ չէ, այդ պատճառով էլ տարիներ առաջ գրված մի հոդվածում առաջարկել ենք նոր եղանակ կապակցություն՝ գեղարվեստական մակդիրություններ, որի առկա հասկանում ենք՝ ա) մակդիրները,

¹ Ա. Յ. Քոբեշտալ, Практическая стилистика русского языка, М., 1968. с. 399.

² Տե՛ս էգ. Ջյրաշյան. Դրականության տեսություն, Ե., 1980, էջ 232:

³ Է. Խաչատրյան, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., 1976, էջ 68:

բ) գործողությունը բնութագրող բառերը⁴: Սույն հոդվածը ևս նվիրված է այդ վիճահարույց հարցի քննությանը:

Մակդիրի մասին, որպես ոճաբանական կարգի, խոսքի պատկերավորման միջոցի, խոսվում է դեռ հին աշխարհի հոետորական արվեստի տեսությանը վերաբերող ուսումնասիրություններում: Արիստոտելը, օրինակ, իր «Պոետիկա» աշխատության մեջ քննում է ոճական այնպիսի հարցեր, որոնք կապվում են բանաստեղծական խոսքի առանձնահատկությունների հետ: Ըստ Արիստոտելի, որպեսզի լեզուն պարզունակ, հասարակ շինի, խոսքի մեջ պետք է գործածվեն «մետաֆորներ, էպիտետներ», որոնք «խոսքը դարձնում են վեհ, ազնիվ»: Սակայն լեզվական այդպիսի տարրերի ու միջոցների գործածությունը չպետք է լինի բռնազրոսիկ, այլ համապատասխանի խոսքի բովանդակությանը, բխի իրերի բնույթից⁵: Դա առավելապես վերաբերում է մակդիրներին, որոնցով գրողն արտահայտում է իր վերաբերմունքը նկարագրվող երևույթների նկատմամբ: Արիստոտելի առաջադրած կարևոր պահանջներից մեկը ոճական միասնությունն է, ոճի համապատասխանությունը: Իսկ ոճական միասնություն կարող է ստեղծվել միայն այն դեպքում, երբ գործածված լեզվական միջոցները համապատասխանում են նյութի բովանդակությանը, ճիշտ են արտահայտում հեղինակի մտքերն ու զգացմունքները:

Մակդիրի առանձնահատկությունները ճիշտ հասկանալու, գեղարվեստական խոսքում նրա դերը ցուցադրելու համար նախ պետք է պարզել այդ հասկացության բովանդակությունը, դրա էությունը, ինչպես նաև սովորական որոշիչ համեմատությամբ ունեցած տարբերակիչ հատկանիշները:

Մեր անցյալի քերականագիտական աշխատություններում գոյական անվան վրա դրված ամեն մի բառ համարվել է մակդիր և ըստ էության նույնացվել ածականի հետ. «Որք զինչ լինելն նշանակեն, կոչին գոյական կամ էական. և որ զինչպիսի լինելն, ածական կամ վերադիր, մակդիր, զի ածին կամ դնին ի վերայ գոյականին»⁶: Մակդիր, մակադրական բառերը նույն իմաստով են բացատրված «նոր բառգիրք հայկազեան լեզուի» և Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում»: Այսպիսով, լեզվական-քերականական ըմբռնումով գոյականի վրա դրված ամեն մի բառ համարվել է մակդիր (ֆարեշենք, փայտյա սանդուղք, մարմարյա սյուներ, լուսավոր սենյակ, լուսավոր թախիծ, մերկ անտառ, այրող կարոտ, կայծակեղեն թրեր, քափառական ամպեր և այլն): Պարզ է, որ նման բնորոշմամբ մակդիրն ու որոշիչը չեն տարբերակվում, և մակդիրը նույնացվում է քերականական որոշիչին: Մակդիրը հենց այդպես էլ բնորոշված է էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (Ե., 1976), իբրև «գոյականի վրա դրվող և նրա հատկանիշը լույս տվող բառ կամ բառակապակցություն»: Մակդիրի նման բնորոշումը կամ ըմբռնումը, իհարկե, սխալ չի կարելի համարել, քանի որ մակդիր եզրույթը տվյալ դեպքում գործածվում է իր ամենալայն իմաստով: Սակայն նկատենք, որ XIX դ. սկսած՝ մակդիր եզրույթն ավելի շատ գործածվում է նեղ, գրական-

⁴ Տե՛ս Հայոց լեզուն և գրականությունը գաղափար, 1984, № 4, էջ 17:

⁵ Տե՛ս Արիստոտել, Պոետիկա, Ե., 1955, էջ 200:

⁶ Արսեն Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 6:

նադիտական առումով: Հետևաբար, եթե առաջնորդվենք վերը բերված բնորոշմամբ, ապա ստվերի տակ կմնան ոճական որոշակի դեր ունեցող գեղարվեստական մակդիրներ: Նորագույն գրականության մեջ ընդգծվում է հատկապես մակդիրի արտահայտչական կողմը: Օ. Ախմանովայի «Լեզվաբանական բառարանում» մակդիրը բնորոշվում է որպես պատկերավոր որոշիչ, ավելի ճիշտ՝ որոշիչ տարատեսակ, որ առանձնանում է սովորական որոշիչի հույականությամբ ու փոխաբերական նշանակությամբ⁷: Մակդիրը գրեթե նույն ձևով է բնորոշված ԳԱ հրատարակած «Լեզվաբանական բառարանում»: Մակդիրներն այն որոշիչներն են, որոնք գեղարվեստական խոսքի մեջ գործածվում են առարկաների, երևույթների էական, բնորոշ կամ որպես այդպիսին դիպվող, ընդգծվող հատկանիշները նշելու համար և նպաստում են խոսքի զգացական երանգավորմանն ու ավելի ազդեցիկ դարձնում այն»⁸:

Դրականադիտական աշխատություններում, ոճաբանական գրականության մեջ էլ մակդիրի բնորոշման հարցում կան տարակարծություններ: Տարբեր ուսումնասիրողները մակդիրին տվել են տարբեր բնորոշումներ, որոնք սալայն, ըստ էության, իրարից տարբերվում են միայն ձևակերպումներով. «Մակդիրը տվյալ բնագրում նկարագրվող երևույթի ամենաէական կողմերը նշող գեղարվեստական բնորոշում է»⁹: Սրանից գրեթե չի տարբերվում հետևյալ բնորոշումը. «Մակդիրը առարկան կամ երևույթը գեղագիտորեն բնութագրող որոշիչ է»¹⁰: Կամ՝ «Մակդիրը կոչվում է այն բառը կամ բառակապակցությունը, որ ցույց է տալիս առարկայի առաջին, առավել ուժեղ տպավորություն թողնող հատկանիշը»¹¹: Այս բնորոշումը խիստ թերի է, քանի որ նրանում բացակայում է մակդիրի ամենակարևոր հատկանիշը՝ հեղինակային վերաբերմունքն ու գնահատականը: Առավել ամբողջական է էդ. Ջորաշյանի բնորոշումը. «Մակդիրը (էպիտետ) մեկ կամ մի քանի բառից բաղկացած գեղարվեստական բնորոշում է, որը մատնանշում և ընդգծում է երևույթի որևէ հատկանիշ և նրա նկատմամբ որոշակի վերաբերմունք է արտահայտում»¹²: Անշուշտ, ճիշտ է նկատված, որ մակդիրը նկարագրվող երևույթի նկատմամբ որոշակի վերաբերմունք է արտահայտում, մի հատկանիշ, որ բացակայում էր նախորդ բնորոշման մեջ, բայց, կարծում ենք, ոչ միայն երևույթի, չէ՞ որ մակդիրով բնութագրվում են ոչ միայն երևույթներ, այլև առարկաներ: Քանի որ մակդիրներն ունեն անհատական բնույթ, և նրանց մեջ միշտ էլ դրսևորվում է գրողի վերաբերմունքն ու հուզական գնահատականը, հետևաբար մակդիրի բնորոշման մեջ պետք է տեղ դանի նաև այդ առանձնահատկությունը:

Մենք նպատակահարմար ենք գտնում մակդիրը բնորոշել հետևյալ կերպ.

Այն բառը կամ բառակապակցությունը, որ արտահայտությունն ու պատկերավոր ձևով բնորոշում. բնութագրում է առարկան, երևույթը հեղինակային վերաբերմունքով՝ արտահայտելով գրողի հուզական վերաբերմունքն ու գնահատականը, կոչվում է մակդիր:

⁷ Օ. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966, с. 527.

⁸ Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 208.

⁹ Г. Л. Абрамович, Введение в литературоведение, М., 1979, с. 150.

¹⁰ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2, Ե., 1991, էջ 44.

¹¹ Երևանի համալսարանի Գիտական աշխատություններ, հ. 42, Ե., 1954, էջ 145.

¹² Էդ. Ջորաշյան, Գրականագիտության ներածություն, Ե., 1996, էջ 154.

Քերականական իմաստով, անշուշտ, մակդիրը համընկնում է որոշին, բայց դրանք նույնացնել չի կարելի, քանի որ, եթե լայն առումով բոլոր մակդիրները որոշիչ են, ապա, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, բոլոր որոշիչները մակդիր չեն։ Պետք է որոշակիորեն տարբերել մակդիրը առարկան կամ երևույթը որևէ հատկության տեսակետից բնորոշող բառից՝ որոշից։ Ոճական-սրտահայտչական տեսակետից մենք չենք կարող հավասարության նշան դնել մակդիրների (նեղ առումով) և տրամաբանական որոշիչների միջև։ Բայնի որ, ինչպես ասվեց, ամեն մի որոշիչ դեռ մակդիրային արժեք ունի։ Հետևաբար, դրանք պետք է առանձնացվեն։ Սակայն պետք է ասել, որ այս հարցում էլ կան տարակարծություններ։ Ոմանք նույնիսկ ավելորդ ու սխալ են համարում մակդիրների ու տրամաբանական որոշիչների սահմանադատումն ու առանձնացումը։ Այսպես օրինակ՝ Լ. Տիմոֆեևը այն միտքն է հայտնում, որ կարիք չկա այդպիսի առանձնացման։ Նա ուղղակի գրում է. «Մինչև այժմ մեզ մոտ ձգտում են առանձնացնել մակդիր («գեղարվեստական որոշիչ») հասկացությունը որոշիչ հասկացությունից այն նկատառումով, որ մակդիրը գեղարվեստական, պատկերավոր բնորոշում է, մինչդեռ սովորական որոշիչը գեղարվեստական այդ դերը չունի»։ Ըստ նրա, «ամեն մի որոշիչ, որ ուժեղացնում, ընդգծում է առարկայի բնորոշ, հայտնի որևէ հատկանիշ, մակդիր է»¹³։ Եկատենք, որ այդ սկզբունքով էլ կազմված է Կ. Գորբաչևիչի և Ս. Խաբլուխի «Ռուսաց գրական լեզվի մակդիրների բառարանը»¹⁴։

Մեր կարծիքով, սա մակդիրին տրված զուտ լեզվաբանական բնորոշում է և ըստ էության չի բացահայտում մակդիր հասկացությունը, մանավանդ որ այդ բնորոշման մեջ նույնացված են լեզվական և ոճագիտական կարգերը։ Իսկ մենք գիտենք, որ սկսած հին աշխարհի հռետորական արվեստի տեսություններից՝ մակդիրը միշտ էլ դիտվել է որպես ոճագիտական կարգ, ոճական միջոց և մտել է լեզվի պատկերավորման համակարգի մեջ, Հետևաբար, այդ շրջիօրվությունից խուսափելու համար պետք է հստակ դարձնել մակդիր կոյուղին ու դրանով արտահայտվող հասկացությունը։ Քանի որ լայն առումով մակդիրն իր մեջ ներառում է որոշիչը, ուստի քերականության մեջ ընդհանուր հասկացությունն արտահայտելու համար գործածենք առաջիկ եզրույթը, իսկ մասնավոր իմաստի համար՝ մակդիր, որպեսզի հստակ տարբերակենք քերականական որոշիչները գեղարվեստական ու ոճական որոշակի դեր ունեցող մակդիրներից։

Սովորաբար մակդիրները հակադրում են տրամաբանական որոշիչներին։ Չնայած որ և՛ մակդիրները, և՛ որոշիչներն ունեն ընդհանուր կոդմեր (առարկայի հատկություն ցույց տալը, տարբերակող, առանձնացնող իմաստը), բայց տարբեր են խոսքի մեջ ունեցած իրենց զործառույթային դերով ու նպատակներով։ Որպեսզի պարզ պատկերացնենք տրամաբանական որոշիչների ու մակդիրների տարբերությունը, պետք է բացահայտենք լեզվի մեջ դրանց ունեցած դերը։ Իսկ տրամաբանական որոշիչների դերը ճիշտ ըմբռնելու համար պետք է շոշափել մեկ այլ հարց, որ կապվում է հասկացության ծավալի ու բովանդակության հարաբերության հետ։

Ցուրաքանչյուր հասկացություն ունի ծավալ և բովանդակություն։ Հաս-

¹³ Л. И. Тимофеев, Основы теории литературы, М., 1976, с. 217.

¹⁴ К. С. Горбачевич, Е. П. Хабло. Словарь эпитетов русского литературного языка, Л., 1979.

կացության բովանդակությունը տրամաբանական առումով տվյալ հասկացության մեջ պարունակած առարկայի (կամ առարկաների) հատկությունների ամբողջությունն է¹⁰։ Որինակ՝ ծառ հասկացության բովանդակությունն են կադմում այն բոլոր հատկանիշները, որ հատուկ են այդ առարկային։ Իսկ այդ առարկայի ծավալը այդ հասկացության մեջ պարունակած առարկաների բաղկությունն է, այսինքն՝ աշխարհում գոյություն ունեցող բոլոր ծառերը։ Ծառ բառին ավելացնենք հատկանիշ ցուլց տվող որևէ որոշիչ, կփոխենք այդ հասկացության ծավալն ու բովանդակությունը, ինչպես՝ պտղատու կամ անտառախիտ ծառ։ Ընդգծված հատկանիշներով մենք փոքրացնում ենք ծառ հատկացության ծավալը, քանի որ բացառում ենք ծառերի մյուս տեսակները։ Այլ կերպ ասած՝ ընդգծված որոշիչներով այդ առարկան տարբերակում, առանձնացնում ենք այդ դասի կամ սեռի մեջ մտնող մյուս առարկաներից։ Այսինքն՝ ծառերի այլ տեսակներից (ոչ պտղատու, ոչ սաղարթախիտ)։

Ամեն մի առարկա, երևույթ ունի բաղմամբիվ հատկանիշներ, և ամեն անգամ, երբ դրանց վրա ավելացնում ենք որևէ որոշիչ, ապա դրանով սահմանափակում, առանձնացնում ենք տվյալ առարկան՝ նեղացնելով դրա ծավալը, ընդարձակելով բովանդակությունը (պտղատու կամ սաղարթախիտ ծառն ունի այն բոլոր հատկությունները, ինչ որ հատուկ են բույսին, ծառին, ինչպես նաև պտղատու կամ սաղարթախիտ ծառին)։ Կամ վերցնենք հետևյալ որոշիչ-որոշյալ կապակցությունները՝ փայտե սեղան, կլոր սեղան, հիմն սեղան, ցածր սեղան, սև ձեռնոց, մաշված ձեռնոց, բրդյա ձեռնոց, բարձրահարկ շենք, բարձր շենք, փայտե շենք, հիմն շենք, երկհարկանի շենք և այլն։ Այս բոլոր կապակցություններում էլ ընդգծված որոշիչները նույն դերն են կատարում։ Նրանք տարբերակում են իրենցով բնորոշվող առարկաները։ Հետևաբար, տրամաբանական որոշիչների, որպես լեզվական միջոցի, դերն այն է, որ նրանք մասնավորեցնեն կամ սահմանադատեն տվյալ առարկան, հասկացությունը, տարբերակեն համանման մյուս առարկաներից։ Որոշիչները տարբերակում, առանձնացնում են բնութագրվող առարկաները որևէ հատկության տեսակետից՝ ամեն մի առանձին դեպքում ընդգծելով համասեռ կամ տարասեռ առարկաների այս կամ այն հատկանիշը։ Կարճ ասած՝ տրամաբանական որոշիչներն արտահայտում են համասեռ (կամ տարասեռ) կամ էլ սեռի ու նրա տեսակի սուբյեկտների տարբերակիչ հատկանիշները։

Իսկ ի՞նչ է մակդիրը, ինչո՞վ է տարբերվում տրամաբանական որոշիչներից և ի՞նչ դեր ունի խոսքում։ Մակդիրը ամենից առաջ ոճագիտական կարգ է և չի կարող բնորոշվել միայն լեզվական տեսակետից ու իր տարբերակիչ դերով։ Դա կհանգեցնի միակողմանի մեկնության։ Մակդիրը, ի տարբերություն որոշիչի, այդպիսի տարբերակիչ դեր չունի, ուստի և չի կարող բնութագրվել միայն իր տարբերակիչ դերով։ Ճիշտ է, մակդիրի մեջ էլ տարբերակիչ իմաստ կա, բայց դա հիմնականը, էականը չէ նրա համար։ Այս դեպքում կարևոր են դառնում հեղինակային վերաբերմունքն ու գնահատականը, ինչպես նաև հուզական երանգավորումն ու խոսքում ձեռք բերած ոճական արժեքը։

Մակդիրի գլխավոր կամ հիմնական նպատակը չէ մի առարկան տարբերել նույն տեսակի մյուս առարկաներից։ Համեմատենք հետևյալ բառակապակցությունները. սաղարթախիտ ծառ, փափուկ անկողին, մաքուր ղեկատու, մուշ-

¹⁰ Տե՛ս Գ. Խրուշյան, Ձևական տրամաբանության դասընթաց, Ե., 1967, էջ 84—85։

ված զգեստ, կապույտ վերնաշապիկ: Բերված բառակապակցություններում ընդգծածները որոշիչներ են: Սրանք որոշիչ-որոշյալի կապակցություններ հիմնական հուզական երանգավորման ու հեղինակային վերաբերմունքի, և նրանց գերն էլ բնութագրվող առարկաները միմյանցից տարբերակելն է: Իսկ սգավուր ծառ, փափուկ ժպիտ, մաշված կաթան, կապույտ ամառային կապակցություններում ընդգծված բառերն արդեն մակդիրներ են և միայն նրա համար, որ բնութագրվող առարկաները բնորոշվում են: Հեղինակային վերաբերմունքով և պարունակում են հուզական տարր, այլ: Նրանք գործածված են իրենց ոչ թե ուղղակի, այլ փոխաբերական իմաստներով (սա ամենևին էլ չի նշանակում, թե բոլոր մակդիրներն անխտիր ունեն փոխաբերական նշանակություն): Որոշիչ-որոշյալ կապակցություններում բացառվում է փոխաբերական գործածությունը: Այսպես, դեղին տերև կապակցության մեջ դեղինը մի դեպքում կարող է լինել որոշիչ (Դեղին տերևները թափվել էին մայիսին): Մի այլ դեպքում՝ մակդիր:

Ցրտահար, հողմավար,
Դողացին մեղմաբար,
Տերևները դեղին
Պատեցին իմ ուղին...¹⁶:

Պարզ է, որ ընդգծված կապակցության մեջ դեղին մակդիրը չի գործածվել նրա համար, որ իրենով բնութագրվող առարկան տարբերակի տերևի մյուս հնարավոր տեսակներից, այլ ակնարկում է աշնան ու մենության մասին՝ ընթերցողի մեջ առաջ բերելով աշնանային թախծի և հուսահատական տրամադրություններ, այլ կերպ ասած՝ հուզական լիցք է պարունակում: Չնայած որ մակդիրային կապակցություններում էլ մակդիրները պահպանում են իրենց տարբերակիչ նշանակությունը (այս դեպքում, իհարկե, հեղինակային նրա-կայությունը ու անհատական ընկալումներով ստեղծված հատկանիշներով), բայց չեն նույնանում տրամաբանական որոշիչների հետ, քանի որ ունեն առարկան կամ երևույթի հեղինակային վերաբերմունքով բնութագրող, ընդգծող դեր: Բայց միայն դա չէ մակդիրների ու տրամաբանական որոշիչների տարբերությունը: Մակդիրներն իրենց գերակշիռ մասով հանդես են գալիս փոխաբերական նշանակություններով: Թերևս, մակդիրի հենց այդ հատկությունը նկատի ունի Լ. Տիմոֆեևը, երբ գրում է, թե մակդիրի տարբերակումը դարձույթներից զուրկ է որևէ հիմքից¹⁷:

Հայտնի իրողություն է, որ բառերի փոխաբերական կիրառության շնորհիվ ընդարձակվում է նրանց իմաստային կառուցվածքը, քանի որ ձեռք էն բերում բոլորովին նոր իմաստներ կամ իմաստային նոր երանգներ, որոնք պատկերավոր ու արտահայտիչ են դարձնում խոսքը: Փոխաբերությունը բանաստեղծության մշտական ուղեկիցն է: Պ. Մեակիր բանաստեղծությունը համարում էր «շուռ տված խոսք»: Դեռ իր ժամանակ Արիստոտելը նկատել է. «Ամենից կարևորն է հմտորեն օգտվել մետաֆորաներից: Պոեզիայի բոլոր

¹⁶ Վ. Տերյան. Բանաստեղծություններ, լիակատար ժողովածու, խմբագրությունը էգ. Ջրբաշյանի, Ե., 1985. էջ 35: Տերյանից բերված մյուս օրինակները ևս վերցված են նույն դրբից (փակագծերում նշվում է էջը՝ բնագրին կից):

¹⁷ Տե՛ս Լ. И. Тимофеев, նշվ. աշխ., էջ 218:

շեղեղկություններից միայն դա է, որ սովորել չի կառելի: Այն իսկական տա-
ղանդի նշան է, քանի որ գտնել բնական մեռաֆորաներ, նշանակում է՝ կա-
ռողսնալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը¹⁶:

Հետևաբար փոխաբերական մակդիրներն էլ հուզական ավելի մեծ լիքք են
պարունակում և բառական նոր միջավայրում, ալ բառերի հետ ունեցած նո-
րախոր կառակցությունների շնորհիվ թարմություն են հաղորդում քանաչափ-
հանրա խոսքին, այն դարձնում պատկերավոր ու արտահայտիչ, քանի որ դր-
քանք գրողի ստեղծագործական երևակայության և անհատական ընկալման ար-
դյունք են և խոսքային տվյալ միջավայրում հանդես են գալիս որպես բառ-
պատկերներ: Ահա մի քանի քննորոշ օրինակներ:

Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում,
Երբ տիտու գգվանքով արեպակը մեռնող
Սարերի առժաթե կատարներն է վառում,
Սրբ մթնում կորչում են ծով ու հող (էջ 39):

Կամ՝

Նո քայլում եմ հանդարտ, հատիկ-հատիկ՝
Սև մայթերի դեղին ժախտը տրորելով...¹⁹:
Ծվ բո մաղերի փափուկ բույրերով
Կլղնեմ կյանքս արուբաղուրի պեշ...²⁰:

Քանի որ փոխաբերությունները պարունակում են թաքնված համեմատու-
թյուն, ուստի միշտ էլ պատկերավորություն ստեղծելու նրանց պոտենցիալ
հնարավորություններն սովելի շատ են: Դա վերաբերում է նաև փոխաբերա-
կան մակդիրներին: Այսպես, օրինակ՝

Մաշված այն կածանի բարսկ թելը մնաց
Քարափների կողին ու ծնկների վրա:
Իմ առաջին սիրո առասպելը մնաց
Առունների կապույտ շրթունքների վրա²¹:

Եթե ընդգծված մակդիրները վերցնենք բնագրից դուրս, կզրկվեն իրենց
արտահայտչական ու ոճական արժեքից, քանի որ ներքին կամ թաքնված հա-
մեմատությունը, որ պատկերի հիմքն է, դրսևորվում է միայն խոսքային տրվ-
յալ միջավայրում, ուրիշ բառերի հետ ունեցած կապակցություններում:

Սրբեմն դժվար է խիստ որոշակի սահմաններ դնել սովորական կամ տը-
րամաբանական որոշիչների և մակդիրների միջև, մանավանդ որ, ինչպես այդ
նկատում է Բ. Տոմաշևսկին, նույն բառակապակցությունը խոսքային տարբեր
միջավայրում կարող է հանդես գալ մերթ որպես մակդիր, մերթ որպես տրա-
մաբանական որոշիչ: Նա օրինակ է բերում կարմիր վառդ կապակցությունը:
Այդհղործության ձեռնարկում այն տրամաբանական որոշիչ է, որովհետև տար-
բերում է վարդի այլ տեսակներից, իսկ բանաստեղծական խոսքում՝ մակդիր,

¹⁶ Տե՛ս Արիստոտել, էջ 102:

¹⁹ Բ. Գալստյան. Կեղեզ ռաց արա, Ե., 1975, էջ 6:

²⁰ Նույն տեղում, էջ 155:

²¹ Հ. Ստեփան. Քարափների երգը, Ե., 1968, էջ 30:

քանի որ այլևս տարբերակիչ դեր չունի²²։ Նման դեպքերում պետք է հաշվի առնել բնագրային պայմաններն ու խոսքային միջավայրը, այսինքն. թե տրվյալ կապակցությունը լեզվի գործառական որ ոճում է գործածվում։ Այսպես, օրինակ՝ խոսակցական ոճում ներմակ ժողովրդախոսակցական բառը որոշիչ է (ինձ համար չեմքան թրիզանթեմներ գնիր...), բայց բանաստեղծական խոսքում այն մակդիր է։

Քրիզանթեմ, ներմակ թրիզանթեմ,
Վերջին ծաղիկ, աշնան վերջին հառաչ,
Ծա քեզ էլ ի՞նչ սրտով բարի մաղթեմ,
Իմ տխրություն, կանգնած աչքիս առաջ...²³։

Բերված քառատողում, անշուշտ, ներմակ բառը մակդիր է, քանի որ արտահայտում է հեղինակային վերաբերմունք և ունի հուզական լիցք։ Նշանակում է՝ մակդիրի ճանաչման համար կարևոր է դառնում խոսքային միջավայրը, քանի որ համապատասխան խոսքային պայմաններում են այդպիսի կապակցությունները վերածվում մակդիրային։ Ասվածից հետևում է, որ որոշիչ-որոշյալ կապակցությունը խոսքային տարբեր պայմաններում, լեզվի գործառական տարբեր ոճերում կարող է հանդես գալ ոճական տարբեր նրբերանգներով և վերածվել մակդիրային կապակցության։ Ինչպես պատկերավորման մյուս միջոցները, զանազան դարձույթները, այնպես էլ մակդիրները զեղարվեստական խոսքում ծառայում են նույն նպատակին։ Նրանց բոլորի ոճական դերն այն է, որ նկարագրվող երևույթը ներկայացվի պատկերավոր գրսևորմամբ, հուզական ներգործություն ունենա ընթերցողի վրա։ Չէ՞ որ պատկերավորությունը խոսքի այնպիսի հատկանիշ է, որի շնորհիվ իրական ու շոշափելի են դառնում նկարագրվող առարկան, երևույթը, ընթերցողի մեջ ստեղծվում է նրանց կենդանի ու ամբողջական պատկերը՝ գրողի ստեղծագործական ընկալումով։ Բերենք մի օրինակ՝

Մայրս ուներ ձեռներ բարակ,
Մոմե մատներ երկար ու նուրբ,
Մեղմ աչքերում գգվող կրակ
Այնպես բարի և այնպես նուրբ... (448)։

Հասկանալի է, որ բերված քառատողում մակդիրների գերը գեղարվեստական պատկեր ստեղծելն է։ Հենց այդ հատկության շնորհիվ էլ բանաստեղծական տողը դառնում է հուզական ու ներգործուն։ Ճիշտ է, ընդգծված մակդիրների մեջ կա տարբերակիչ հատկություն, բայց մի՞թե դրանք գործածված են այդ նպատակով։ Անշուշտ, ոչ։

Հաճախ գեղարվեստական ամբողջական պատկերն ստեղծվում է մակդիրային կապակցություններով, որոնք բոլորը միասին ստեղծում են համապատասխան մթնոլորտ՝ հուզական լիցք հաղորդելով խոսքին։

Լույսի նրբամբր տվեց երկնքին,
Կապույտ ծիծաղը ծովին ծավալեց,

²² Б. В. Томашевский, Стихистика и стихосложение, Л., 1959, с. 201.

²³ Գ. Մարյան, Ընտիր երկեր, Ե., 1974, էջ 186։

Ճերմակ ժպիտը սփռեց ձյուններին,
 Վեհության խիենդը լեռներին տվեց:
 Դաշտերին՝ կախա՝ ժպիտը դարնան...
 Դալայը ավեց հավր ու հավթերին²⁴:

Որովա՞ծ հատվածից էլ երևում է, որ գեղարվեստական-ոճական արժեք ունեցող մակդիրների մեջ հիմնականը, էականը հեղինակային վերաբերմունքն ու հնահատականն է, որոգի ստեղծագործական, անհատական ընկալումով ընտանգծված այն հատկանիշները, որոնք նրա դիտակետով դառնում են ամենաէականը խոսքային տվյալ միջավայրում: Պատահական չէ, որ տարբեր (կամ նույն) հեղինակների ստեղծագործություններում հանդիպում ենք այնպիսի մակդիրային կատակցությունների, որոնց մեջ նույն գոյականը բնութագրվում է ամենատարբեր մակդիրներով կամ, ընդհակառակն, նույն մակդիրով բնութագրվում են ամենատարբեր գոյականներ: Ոճական այս հնարանը, օրինակ, բնորոշ է և. Չարենցի ստեղծագործությունների լեզվական արվեստին: Միևնույն մակդիրի տարբեր պոզորգություններն առաջ են բերում խոսքի բազմաբանություն ու գունադեկորություն: Որինակ՝ բուրբ արև, բուրբ սիրտ, բուրբ կարաս, բուրբ օրեր, բուրբ տենչանք, արյունամած մուժ, արյունամած ցանկություն, արյունամած ծխելույզներ, կարմիր գայիք, կարմիր տագնապ, կարմիր կարոտ, կարմիր խնդություն, կարմիր ղեկավար և այլն:

Նայած թե գրողը նկարագրվող առարկայի կամ երևույթի համար ինչն է համարում բնորոշ, հիմնական ու կարևոր հատկանիշ, ըստ այդմ էլ կառարարում է համապատասխան մակդիրների ընտրություն: Նկատենք, որ նույն գոյականն ու տարբեր մակդիրներով բնութագրելը ստեղծագործական տարբեր պահանջ ու տարբեր ընկալումների հետևանք է. մենավոր սիրտ, լվված սիրտ, ցաված սիրտ, հոգնասանց սիրտ, տխուր կյանք, քաղցր կյանք, սև կյանք, ցուրտ կյանք, միևնույն լույսեր, ցուրտ լույսեր, մոռյլ տանջանք, քաղցր տանջանք, հրապուրիչ խանդ, խելագար խանդ, փափուկ թախիծ, փափուկ ժպիտ, փափուկ ծիծաղ, անհույսություն, կապույտ յոռություն և այլն:

Ամեն պնդում մակդիրի միջոցով գրողն ընդդժում, առանձնացնում է նրկարագրվող երևույթի այն կողմերը, այն հատկությունները, որոնք նա համարում է ամենից կարևորը խոսքային այդ միջավայրում, որպեսզի ընթերցողը առարկայի կամ երևույթի հենց այդ կողմն ընկալի. դրա վրա կենտրոնացնի իր ուղե ուղադրությունը: Ընդհատ է նկատված, որ Երնչյան լուսանկարիչը պայծառ լույսը պցում է առարկայի՝ իր համար սենսանելի ու կարևոր մասի վրա²⁵, ավելու էլ գրողը մակդիրի միջոցով ընդգծում, առանձնացնում է նրկարագրվող առարկայի կամ երևույթի հենց այդ կողմերը: Դրա լավագույն օրինակը Չարենցի հայտնի բանաստեղծությունն է, որի մեջ գործածված մակդիրները ոչ միայն իմաստային մեծ բեռ են կրում, այլև ստեղծում են Հայաստանի կենդանի դիմանկարը, բացահայտում երկրի ու ժողովրդի անցած ուղին՝ դժվարին ու արյունոտ. ամուլ Հայաստան, արևահամ բառ, հին սաղի ողբանիւղ, լացակումած լար, արևահամ ծաղիկների բույրը վառման, նախյան

²⁴ Լ. Շիրազ, Քնար Հայաստանի, Ե., 1958, էջ 453:

²⁵ Ծրեանի համալսարանի Գիտական աշխատություններ, հ. 42, էջ 148:

աղջիկների հեգանկում պար, վիշապաձայն բուք, մթնում կուրած խրճիթների անհյուրընկալ պատերը սև և այլն:

Մակդիրն, ըստ էության, գրողի գեղարվեստական մտածողության. նրա ստեղծագործական ընկալման արդյունք է և կրում է անհատական բնույթ. այսինքն՝ ունի սուբյեկտիվ կողմ: Պատահական չէ, որ նոր ու թարմ մակդիրները հիմնականում ստեղծվում են նոր բառակերտումներով՝ հեղինակային նորաբանություններով, որոնք դառնում են բառ-պատկերներ և մեծ մասամբ դիպվածային բնույթ են կրում: Գրողն աշխատում է տվյալ առարկայի կամ երևույթի մեջ հայտնաբերել այնպիսի հատկանիշներ, որոնք սովորական կամ «անդեն» աչքի համար տեսանելի չեն: Նա իր ստեղծագործական երևակայությամբ դրանց մեջ հայտնաբերում է նոր հատկանիշներ կամ, ելնելով բնագրային հանգամանքներից, կարևորում այս կամ այն հատկանիշը, որ նրա ընկալումով դառնում է առաջնային և այդպիսով թարմություն և իմաստային խորություն է հաղորդում իր խոսքին: Այսպես, օրինակ, Պ. Սևակն իր «Անլուելի զանգակատուն» պոեմում գործածել է այսպիսի մակդիրային կապակցություններ՝ ձոգելաբանի ծաղրածանակ, հայրենաբաղ շաքեր, սաբդոստայնային լուծություն, ծոցվուր ծառեր, որոնք, մեր կարծիքով, հիմնականում անհատական էնկալման արդյունք են: Այդպիսիք են նաև «Մարդը ափի մեջ» գրքում գործածված մի շարք մակդիրներ՝ կրճատ վզնոց, խանդոտ գոտի, սահմանապահ լուծություն, համա մայթեր, հոգեբուժական բարություն, խոսուն շիկանք, հեգեգած մայթեր, ջերմ ձյուն, համառոտ անդրավարտիք, հաղկադիր պաշ, մրսկան արտերի դադողուն կանչ, կանանց ոտքերի կտկտացող նազանք և այլն:

Անհատական բնույթ կրող մի քանի մակդիրներ էլ բերենք Հ. Շիրազի «Հայոց գանթեականը» պոեմից. բյուրալեո Հայաստան, վիշապաուրկուր քարայր, եղեռնավկա անապատ, դանգե լեռներ, դիատար դետեր, թուրֆայաթաղան դոխթ, թուրֆանդում ձեռք և այլն:

Հետևաբար, մակդիրները, որպես խոսքի պատկերավորման միջոց, իրենց բնութագրող դերով հանդերձ՝ ունեն անհատական բնույթ, և գրողի կամ բանաստեղծի ոճը բնութագրող, նրա անհատական լեզվարվեստը ցուցադրող կարևոր տարրեր են: Անշուշտ, ճիշտ չէր լինի կարծել, թե բոլոր մակդիրներն անխելորդ ունենում են փոխաբերական նշանակություն: Մակդիրները կարող են գործածվել նաև իրենց բառային ուղղակի իմաստներով: Հենց այս կարգի մակդիրներն են, որ շփման եզրեր ունեն տրամաբանական որոշիչների հետ, ուստի և հաճախ դրանց տարբերակման հարցում դժվարություններ են առաջանում: Հասկանալի է, որ նման դեպքերում պետք է հաշվի առնել խոսքային միջավայրն ու բնագրային պայմանները: Վերցնենք մի օրինակ՝ Մարանր ներմակ զգեստով, գունատ դեմքով մի աղջիկ էր: Այս նախադասության մեջ հազիվ թե ընդգծված բառերը դիտվեն որպես մակդիրներ, եթե անդամ տրվյալ նախադասությունը դիտենք արձակից վերցրած տող (առավել ևս եթե գործածված լինի խոսակցական ոճում), չենք կարող մակդիր համարել: Բայց անհա Տերյանի հայտնի տողում դրանք մակդիր են.

Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև

Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ներմակ շորերով... (27):

Մակդիրներն իրենց բառային իմաստներով են գործածված Զաբենցի հե-
տևյալ տողերում.

Երկինքը գորշ է:—Պղտուր նեան

Դանդաղ խփում է իր ափերին

Եվ մառախուղը ծխանման

Իջել է թանձր²⁶:

Եվ կանգնում է դեմս, ով տառապյալ հանձար,

քո կերպարանքը քարե²⁷:

Սրբման կողմ-կողքի կարող են գործածվել փոխաբերական և ոչ փոխաբե-
րական մակդիրներ: Օրինակ՝ Վ. Դավթյանը ոճական այդ հնարանքով ստեղ-
ծել է սլափական երանգավորում.

Եվ պղնձն հաղար շեփոր սլարզվեց ծագող արեգակին,

Եվ պղնձն արեգակից փայլատակեց հաղար ծնծղա,

Եվ շեփորներն այդ պղնձն ղողանջեցին միանգամից,

Միանգամից ծիծաղեցին ծնծղաները պղնձաձայն...

Պղնձաղեմ հաղար քուրմեր ծնկի եկան միանգամից...²⁸:

Կան մակդիրներ, որոնք տրամաբանական որոշիչներից տարբերելու հա-
մար խոսքային ավելի մեծ միջավայր է պահանջվում: Դա վերաբերում է հատ-
կապես ոչ փոխաբերական, ուղղակի իմաստներով գործածված մակդիրներին,
քանի որ փոխաբերական մակդիրները հիմնականում տարբերակվում են, թեև
կարող են լինել նաև փոխաբերական ղործածություն ունեցող մակդիրներ էլ,
որոնց համար նույնպես պահանջվի խոսքային ծավալուն միջավայր: Այսպես,
նույն Վ. Դավթյանի «Կա մի հայ աղջիկ» բանաստեղծության մեջ, որ նվիրված
է Ալիսիա Կիրակոսյանին, նա ղործածել է սպիտակ սուգ մակդիրային կապակ-
ցությունը (Հին խնձորենու ծաղկաթերթերի նույն սուգն սպիտակ), որի իմաս-
տը հասկանալու համար պետք է բերել ամբողջ տասնմեկ տող, իսկ ռաբբինի
արևգակ մակդիրային կապակցության մեջ ընդգծված մակդիրի իմաստն ըն-
կալվում է բանաստեղծության ամբողջ հյուսվածքում:

Մակդիրները սովորաբար արտահայտվում են ածականներով.

Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ,

Քնքուշ ձեռներդ ես կհամբուրեմ,

Կցրեմ կյանքի հուշերը ցավոտ

Ու հեփաթային լույսեր կվառեմ (64):

Սակայն ոչ հազվադեպ մակդիրները կարող են արտահայտվել նաև գոյա-
կաններով: Այս կարգի մակդիրներն ունենում են փոխաբերական նշանակու-
թյուն: Ըստ որում, մակդիրը առարկան կամ երևույթը բնութագրում է տվյալ
գոյականի հիմնական հատկանիշով: Այսպես, օրինակ՝ Ավ. Իսահակյանի հե-
տևյալ տողերում փուլ ու քաղ գոյականների հիմնական հատկանիշներով բը-
նութագրված են աշխարհն ու մարդկանց սրտերը.

²⁶ Ս. Չառենց, Երկերի ժողովածու, Ե., 1968, հ. 4, էջ 72:

²⁷ Նույն տեղում, էջ 224:

²⁸ Վ. Դավթյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1975, էջ 21:

Այս փուլը աշխարհում, քառ սրտերի մեջ
Ծրգ իմ, քեզ համար վայել վայր չկա...²⁹:

Փոխարենական մակդիրների իմաստն ինքնին հասկանալի է՝ անտարբեր, անզգա, անկարեկից սրտեր և փշի նման խոցող աշխարհ:

Մակդիրները կարող են արտահայտվել նաև անկախ դերբայներով, հիմնականում հարակատար և ենթակայական. օրինակ՝

Նա շունն խոցող թովչանքը կնոջ,
Նա մոտենում էր որպես քաղցր քույր... (47):
Ցաված սիրտս միայն քեզնով է շնչել... (428):

Մակդիրները կարող են արտահայտվել բառակապակցություններով, կապային կառույցներով, օրինակ՝

Թովիչ ֆեֆշուքյամբ նաեզնող աշխարհում
Ծրեկոն վառեց լույսեր դժգունակ... (48):
Քո ժպիտը՝ թունոտ ծաղկանց բույրի նման,
Որ տիրաբար արեցնելով մահ է բերում,
Քո խենթ մարմնի սարսուռները երջանկության
Ախտաբորբոք արևներ են բոցավառում... (87):
Մթնում բորբոքվեց մի արևոտ համբույր՝
Մեղֆի պես թովիչ. ցավի պես խելառ... (57):

Մակդիրները դասակարգվում են նաև ըստ բովանդակության, սակայն պետք է ասել, որ այդ դասակարգման մեջ որոշ պայմանականություն կա, քանի որ նույն մակդիրի մեջ կարող են համատեղվել և նկարագրական, և քնարական տարրեր: Մասնագիտական գրականության մեջ սովորաբար ըստ բովանդակության առանձնացնում են հետևյալ մակդիրները՝ 1. նկարագրական (բազմաստիճան արմավենի, մացառավոր հոնքեր, յոթներանգ ծիածան, կործանաբար մոլորություն, պղնձակուռ շքամուտք, ակնակուռ գոտի, դաշունաձև սպառաժներ), 2. քնարական (փխրուն ձեռքեր, նրբակերտ մթնշաղ, ֆեֆուշ երազ, երկնաշող երազներ, ֆեֆուշ սուտ), 3. գույնով բնորոշվող մակդիրներ (գունային մակդիրներ տարածված անվանումը մենք ճիշտ չենք համարում. կապույտ հաժումներ, կապույտ երազ, կապույտ աղջիկ, դեղին թախիժ, դեղին մորմոք, դեղին ժպիտ, կապույտ ամայություն, կապույտ մենություն, կապույտ նիրհ, կարմիր կարոտ), 4) մշտական մակդիրներ, որ գործածվում են ժողովրդական բանահյուսության մեջ, ժողովրդական երգերում (ծով դարդեր, նախշուն հավքեր, ալվան-ալվան ծաղիկներ, ոսկի փեշակ, պաղ-պաղ աղբյուրներ, դարդոտ սիրտ, ծով կարոտ, փյաճլան ձի, զմրուխտ հավքեր):

Ինչպես ասացինք, ոճաբանական նորագույն գրականության մեջ մակդիրների շարքն են դասվում նաև գործողությունն բնութագրող բառերը, որոնք իրենց քերականական դերով մոտենում են մակբայներին, իսկ շարահյուսական կիրառությամբ՝ ձևի պարագաներին: Համեմատենք հետևյալ բառակապակցությունները՝ տխուր ժպիտ—տխուր ժպտալ, մեղմ շշուշ—մեղմ շշնջալ, դառնագին հեկեկանք—դառնագին հեկեկալ, անուշ փայփայանք—անուշ փայ-

²⁹ Ավ. Խաճակյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1973, էջ 146:

փափակ և ալիք: Անկասկած է, որ քերականորեն ձևի պարագայի դեր կատարող ույս լատերը ևս գեղարվեստական խոսքում որոշակի դեր ունեն և մոտենում են մակդիրներին, սակայն, ինչպես արդեն նշել ենք, դրանց նույնացումը ձիշտ չէր լինի: Այսինքն՝ մակդիրը ավանդաբար կապվել է գոյականի հետ և դիտվել է ու այսօր էլ դիտվում է որպես գոյականի վրա դրվող բառ: Երկրորդ՝ որքան էլ դրույր նոր հատկանիշներ հայտնաբերի նկարագրվող առարկաների ու երեվոյթների մեջ, միևնույն է, դրանք բխում են այդ առարկաների ու երևույթների բնույթից, նրանց էությունից: Գրողի ստեղծագործական երևակայությամբ հայտնարևյալած հասկանիշները պատճառական կապերի մեջ են գտնվում ալ առարկաների ու երևույթների հետ: Երկրորդ՝ գործողությունը բնութագրող բառերով դրույր նոր հատկանիշներ չի հայտնաբերում, ալ միայն բնութագրում է այդ գործողությունները հեղինակային վերաբերմունքով, որը և պատկերավոր ու արտահայտիչ է դարձնում խոսքը: Այսպես, օրինակ՝

Արյունաքամ մայր էր մտնում հաղարամյա արևը հին,
Արյունավառ ժպտում էր մեղ այս աշխարհը իրիկնային³⁰:

Ընդգծված լատերը, անշուշտ, բնութագրում են գործողությունը հեղինակային վերաբերմունքով (դրանով, իհարկե, մոտենում են մակդիրներին) և հենց այդ պատճառով էլ խոսքը դարձնում են պատկերավոր, հետևաբար ունեն դեղարվեստական որոշակի դեր: Բերենք մի ալ օրինակ՝

Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցեք,
Որ խաղաղ ու հանգիստ մահանան,
Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք,
Լուսթյուն, լուսթյուն, լուսթյուն անսահման... (39):

Այս բառատողում ընդգծված բառերն ստեղծել են բանաստեղծական այն-սիսի մթնոլորտ, որ համահնչուն է բանաստեղծության բովանդակությանը: Հետևաբար, գործողությունը բնութագրող այդ բառերը ևս պատկերավորման անհրաժեշտ միջոցներ են: Հաճախ մակդիրներն ու գործողությունը բնութագրող այդ բառերը հանգես են գալիս միասնաբար և ներհյուսվելով դառնում են ամբողջական պատկերի հիմք:

Եվ աղջիկները մեր լուսաստիւն
Մոտիկ վայելումի թաքուն դուրից շիկնած՝
Կաքավում են զվարթ և սպասում
Փեսաներին իրենց ֆաջագոտի...³¹:

Ասվածից հետևում է, որ գեղարվեստական պատկեր ստեղծելիս բանաստեղծին չեն բավարարում մակդիրները: Իր խոսքին հուզականություն և արտահայտչականություն հաղորդելու համար նա դիմում է ալ միջոցների, որոնցից մեկն էլ գործողությունը բնութագրող այդ բառերն են:

³⁰ Խ. Զարեկ, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1963, էջ 86:

³¹ Վ. Ղալթյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1975, էջ 26:

ХУДОЖЕСТВЕННЫЕ ПРИЛОЖЕНИЯ

А. А. МАРУТЯН

Резюме

Художественные приложения представляют большой интерес в плане стилистики. В современной стилистической литературе эпитетами считаются также слова, характеризующие действие и совпадающие с обстоятельствами.

Эпитеты следует отличать, с одной стороны, от грамматических определений, с другой — от слов, характеризующих действие. Эти слова, несмотря на общность с эпитетами (в обоих случаях предмет или действие характеризуются, выражая тем самым отношение писателя) не тождественны им, поскольку эпитет, во-первых, характеризует предмет, во-вторых, выявленные писателем признаки вытекают из сущности характеризуемых предметов и явлений, и, наконец, в-третьих, словами, характеризующими действия, новые признаки не выявляются.

В узком значении следует употреблять термин «эпитет», а для эпитетов и слов, характеризующих действие, художественные приложения.